



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 7 ՂԵԿՏԵՄԲԵՐ, 2015

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 149

ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ ՄԱՐԴՈՑ ՓԱՌՔԸ

Նոր երգ երգեցէ՛ք Տիրոջ:

Աստուծոյ ժողովուրդը իր Արարիչով թող ուրախանայ,  
Սիոնի որդիները իրենց Թագաւորով թող ցնձան:  
Երգ ու պարով թող օրհներգեն անոր անունը,  
Որովհետեւ Տէրը կը սիրէ իր ժողովուրդը,  
եւ փրկելով կը փառաւորէ խոնարհները:  
Ուստի Տիրոջ հաւատարիմ մարդիկը  
թող պարծենան իրենց փառքով,  
թող ցնձան իրենց հանգիստին մէջ:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

### ԱՂՈԹՔ

Պահապան ամենայնի Զրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,  
ի նստիլ ի Կան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 2:9-16)



## ԱՍՏՈՒԾՈՅ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ (2:9-16)

Պօղոս Առաքեալ շարունակելով իր խօսքը կ'ըսէ. «**Աստուած զինք սիրողներուն համար պարաստեց այնպիսի փառք մը, որ ռեւէ աչք չէ փեսամ, ռեւէ ականջ չէ լսած, եւ ռեւէ մէկուն միտքէն իսկ չէ անցած**» (9 հմր): Նախ խօսքին մէկ մասը մէջբերում է Եսայիի մարգարտութենէն (64:4), ի վարբերութիւն, որ այնպէս կը խոստացուի անոնց, որոնք յոյսով Աստուծոյ ողորմութեան կը սպասեն, իսկ այսպէս՝ անոնց որոնք զԱստուած կը սիրեն: Սա կը նշանակէ, թէ Հին Կրակարանին մէջ յոյսը բարձրագոյն առաքինութիւնն էր, իսկ Նոր Կրակարանին մէջ Սէրը Աստուծոյ ժողովուրդին յարկանիշն է: Եթէ երբեք Պօղոս Առաքեալ շեշտը սիրոյ վրայ կը դնէ, որովհետեւ ինչ որ կը պակսի Կորնթոսի հաւատացեալներուն սէրն է, որուն պարճառով է որ անոնք բաժանման մէջ են: Հետեւաբար, Աստուած զինք սիրողներուն համար պարաստեց է այնպիսի փառք մը, որ ականարկութիւնն է յաւիտենական կեանքին, երկինքի արքայութեան, Աստուծոյ թագաւորութեան: Փառք մը որ ռեւէ մէկուն միտք չէ անցած:

Եթէ երբեք մէկու մը միտքէ չէ անցած, ու մանաւանդ ռեւէ մէկ աչք չէ փեսամ ու ականջ չէ լսած, ուրկէ գիտէ հապա այդ փառքի մասին: Ահա Առաքեալը կու գայ ըսելու, թէ «**Աստուած մեզի յայտնեց այդ խորհուրդը իր Հոգիին միջոցաւ, որովհետեւ Հոգին, որ ամէն ինչ կը քննէ, զիպէ Աստուծոյ նոյնիսկ ամենաձածուկ ծրագիրները**» (10 հմր): Սա կը նշանակէ, որ Աստուծոյ Հոգին է յայտնողը այս խորհուրդներու մասին: Այն Հոգի որ խոստացաւ Քրիստոս զրկել Իր առաքեալներուն, որ պիտի զրկուէր իբրեւ Միսիթարիչը, սորվեցնելու այն ամէն ինչ խօսեցաւ Քրիստոս: Սուրբ Հոգին է որ իր աստուածային բնութեամբ յոյս կը սփռէ ու կը լուսաւորելու հաւատացեալին միտքն ու հոգին հասկնալու աստուածային խորհուրդները:

Եւ ահա համեմատութիւն մը կ'ընէ մարդու հոգիին եւ Աստուծոյ Հոգիին միջեւ, ըսելով. «**Մարդոցմէ ո՛վ կրնայ մարդու խորհուրդները ճանչնալ, եթէ ոչ՝ նոյնինքն մարդու հոգին: Նոյնպէս ալ ոչ ոք կրնայ զիպնալ Աստուծոյ խորհուրդները, եթէ ոչ՝ Աստուծոյ Հոգին**» (11 հմր): Այսպէս, սակայն, շեշտը Աստուծոյ Հոգին է, առանց որուն մարդը անկարելի պիտի ըլլար հասկնալու Աստուծոյ խորհուրդները, եւ այս պարագային Աստուծոյ պարաստեց փրկութեան ծրագրին խորհուրդը ինչ որ անհասկնալի է մարդոց, ու մարդկային մտքին:

Որովհետեւ, «**Մենք այս աշխարհի հոգին չէր որ առինք, այլ՝ Աստուծմէ զրկուած Հոգին, որպէսզի ճանչնանք Աստուծմէ մեզի շնորհուած պարգեւները**» (12 հմր): Այսպէս «աշխարհին հոգին» ըսելով կը նշանակէ այն ինչ որ աստուածայինը չէ, այն ինչ որ այս աշխարհին յարուկ է: Տակաւին, շարեւ, անոր մէջ փեսնելով, որպէս չար ներկայացնող: Բայց որպէսզի կարենային հասկնալ Աստուծոյ պարաստեց պարգեւները, պէտք էր որ Աստուծոյ Հոգին փրուէր:

Ահա նոյն Հոգին է, որ ոչ միայն պարգեւը կու փայ եւ կամ պարգեւմին իմաստը, այլ նաեւ՝ այդ պարգեւը փոխանցելու կերպն ու եղանակը: Անոր համար ալ կ'ըսէ. «**Ինչ որ կը խօսինք՝ մարդկային իմաստութեան բերումը եղող խօսքեր չեն, այլ՝ Սուրբ Հոգիին կողմէ սորվեցուած իմաստութեամբ հոգեւոր ճշմարտութիւններ կը բացատրենք հոգեւոր մարդոց**» (13 հմր): Որովհետեւ Առաքեալին փոխանցածը յարակ, լուրջ, հզօր, ներգործող, ուղիղ ճամբան է որ կը փանի փրկութեան: Այս հոգեւոր ճշմարտութիւնները կը բացատրենք հոգեւոր մարդոց: Որովհետեւ առաջին հերթին, հոգեւոր մարդը միայն կրնայ հասկնալ հոգեւոր ճշմարտութիւններ: Միւս կողմէ, Առաքեալի այս արտայայտութիւնը անոր համար, որ ցոյց կու փայ Կորնթացիներուն թէ իրենք փակաւին հոգեւոր մարդիկը չեն: Իրենք ապրելակերպն իսկ ցոյց կու փայ, թէ փակաւին իրենք մարմնաւոր են, իրենց իսկ բաժանումները այդ մէկը ցոյց կու փան:

**«Աստուծոյ Հոգին չունեցող մարդը չ'ընդունիր Աստուծոյ Հոգիին բերած ճշմարտութիւնները, որովհետեւ անոնք յիմարութիւն կը թուին իրեն. եւ չի կրնար զանոնք ճանչնալ, որովհետեւ անոնք միայն Հոգիով կը քննուին»** (14 հմբ): Աստուծոյ Հոգին չունեցող մարդը այն մարդն է որ փակաւին շնչաւորն է, այսինքն իր մէջ չէ արթնցած հոգեւոր կարողութիւնները Սուրբ Հոգիին հեղումով, որուն աշխարհայեացքը նիւթական է եւ շահագրգռութիւնները աշխարհիկ: Վերստին ծնունդ չստացած մարդը միտքի լոյսով կը կշռադատէ եւ կ'արժեւորէ ամէն ինչ, չոր ու ցամաք փրամաբանութեան կը վստահի: Նաեւ շնչաւոր են անոնք, որոնք հաւատարեցաւ կրնան ըլլալ, բայց փակաւին իրենց փկարութեան ու անկատարութեան պարճառով չեն կրնար ըմբռնել Աւերարանի խորհուրդները: Այսպիսիներուն համար Առաքեալը պիտի կոչէ մանուկներ, հագիւ կաթով կը սնանին:

**«Իսկ Աստուծոյ Հոգին ունեցող մարդը ամէն ինչ կը քննէ, բայց ինք ռեւէ մէկէն չի քննուիր»** (15 հմբ): Որովհետեւ Աստուծոյ Հոգին կը ներգործէ այդ անձին մէջ, այդ նոյն Հոգիով ալ այդ անձը կրնայ հասկնալ Աստուծոյ խորհուրդները: Իսկ թէ ինչո՞ւ «ինք ռեւէ մէկէն չի քննուիր»: նախ որոշ է որ ամէն ճշմարտութիւն Աստուծոյ մէջ է, այդ ճշմարտութիւնները կը յայտնուին միայն Հոգիին միջոցաւ, որովհետեւ միայն Ս. Հոգին է որ զիպէ Աստուծոյ խորհուրդները: Արդ, որպէսզի մէկը կարենայ ուղիղ քննել հոգեւորը, անոր խօսքերն ու վարքը, պէտք է որ ինք եւս այդ Հոգին ունենայ:

**«Ո՛վ կրցաւ երբեք Տիրոջ միտքը կարդալ, որ կարենայ խորհուրդ փալ անոր: Բայց մենք գիտենք թէ Քրիստոս ինչ կը խորհի»** (16 հմբ): Քրիստոսի միտքը ունենալ, կը նշանակէ, իմանալ, գիտնալ Աստուծոյ կամքը, եւ այդ կամքին համաձայն ապրիլ: Իսկ շնչաւորը այդ միտքը չունի, եւ ըստ այնմ չի կրնար հասկնալ: Մինչ հոգեւորը ունի Քրիստոսի միտքը, որ ոչ միայն կրնայ հասկնալ, այլ նաեւ Քրիստոս ցոյց կու տայ մոլորութիւնները որ յարուկ են շնչաւորին: